

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ. - Միջինասիական թատրոնը	97
Հ. ՅՈՒՆԻԿ ՊՈՒՇԼԻԿԵԱՆ. - Բեթլեհի Շանտոր	117
ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ. - Գեղոն Հայ լեզուի	130
Ե. ՆԱՅԻՐԵԱՆ. - Գիտության անոց	130

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՃԵԱՆ. - Արծրունեաց թագաւորութեան շարունակութիւնը վասպուրականի մէջ	103
Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ. - Սելճուքեան թուրքերու արշաւանքը (շար.)	131

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓՐՈՅ. Ա. ԽԱՆՈՒԼԻ. - Պրոֆ. Գիտարիսի «Աստուածաբանական Տարերը»-ը Սիմէոն Միայնակեցիի և Սիմէոն Գառնեցիի թարգմանութեան մէջ (խաւերէն գրուած)	122
---	-----

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ. - «Յուշեր» Անայիսի	139
Հ. Պ. Հ. - Անանիա Շիրակացու Մատենադարանի թիւեր. զորո՞ք Պրոֆ. Գ. Ա. Աբրահամեանի. Երևան, 1944	141

HISTOIRE


Archag Alboyadjian. - La continuation de la dynastie royale des Artzrounis dans Vaspourakan	103
P. Sahak Der-Movsessian. - L'invasion des turcs seldjoucides (suite)	131

PHILOLOGIE

Prof. A. Zanolli. - Sur les éléments théologiques de Proclus le Diadoque dans les versions de Simon le moine et de Simon, évêque de Garni (suite)	122
---	-----

RECENSION

Aram Bedrossian. - «Mes Souvenirs» de M.me Anaïs	139
P. P. - Oeuvres d'Ananias Chirakatzi, étude et publication du Prof. A. Abrahamian	141



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1950
108-րդ ՏԱՐԻ



ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ
ԹԻՒ 5-6

ՄԻՒԹԱՐԵԱՆ ԹԱՏՐՈՆԸ

Հայկական թատրոնը նոր շրջանի արդիւնք է: Թէեւ նախաքրիստոնէական Հայաստանի մէջ թատրոնի գոյութիւնը անփափաքի է, սակայն չունէր ազգային գոյն: Մեծն Աղեքսանդրի տիրապետութեամբ հելլենական գեղարուեստը մուտք գործած էր արդէն մեր մէջ, և Արտաշեսեան հարստութեան օրերուն՝ աւելի եւս զարգացած. հայ բեմերու վրայ կը հանուէին յունական ողբերգութիւններ, ինչպէս կը յիշատակուի յայտնապէս Երիւզիդէսի «Բագոսեաններ»-ու ներկայացումը Արտաշատի մէջ¹, մանաւանդ Տիգրան Գ.ի և անոր որդւոյն թատերգակ Արտաւազդ Բ.ի ժամանակ, որ, ըստ վկայութեան Պլուտարքոսի², հեղինակ էր միանգամայն թատերական գործերու, որոնցմէ ոչինչ հասած է մեզի: Քրիստոնէութիւնը խափանեց այդ շարժումը, որովհետեւ աշխարհիկ ու լպիրշ ներկայացումներով կը փասէր քրիստոնէական մաքուր բարքերուն: Յոյցը, զոչսաներգութիւն բառերը, զոր կը գտնենք նախնեաց պատմական ու հռոմեական գործերու մէջ, ակնարկութիւններ են թատերական թեթեւ ներկայացումներու. նմանապէս Փ. Բիւզանդի յայտնի բացատրութիւնը՝ թէ Գնէլի և Տիրիթի դէպքերը ժողովուրդին մէջ արձագանգ գտած էին ու կը ձեւացուէին³, փաստեր են ապացուցներու համար՝ որ թատրոնական կեանք մը շարունակուեցաւ ժողովրդական խաւերուն մէջ, և շատ հաւանաբար աւելի ճոխ եղանակով մը թագաւորական ու իշխանական թատրոններու շրջանէն:

Դեռ 1843-1950 թվականներին հայկական թատրոնը չունէր ազգային գոյն: Մեծն Աղեքսանդրի տիրապետութեամբ հելլենական գեղարուեստը մուտք գործած էր արդէն մեր մէջ, և Արտաշեսեան հարստութեան օրերուն՝ աւելի եւս զարգացած. հայ բեմերու վրայ կը հանուէին յունական ողբերգութիւններ, ինչպէս կը յիշատակուի յայտնապէս Երիւզիդէսի «Բագոսեաններ»-ու ներկայացումը Արտաշատի մէջ¹, մանաւանդ Տիգրան Գ.ի և անոր որդւոյն թատերգակ Արտաւազդ Բ.ի ժամանակ, որ, ըստ վկայութեան Պլուտարքոսի², հեղինակ էր միանգամայն թատերական գործերու, որոնցմէ ոչինչ հասած է մեզի: Քրիստոնէութիւնը խափանեց այդ շարժումը, որովհետեւ աշխարհիկ ու լպիրշ ներկայացումներով կը փասէր քրիստոնէական մաքուր բարքերուն: Յոյցը, զոչսաներգութիւն բառերը, զոր կը գտնենք նախնեաց պատմական ու հռոմեական գործերու մէջ, ակնարկութիւններ են թատերական թեթեւ ներկայացումներու. նմանապէս Փ. Բիւզանդի յայտնի բացատրութիւնը՝ թէ Գնէլի և Տիրիթի դէպքերը ժողովուրդին մէջ արձագանգ գտած էին ու կը ձեւացուէին³, փաստեր են ապացուցներու համար՝ որ թատրոնական կեանք մը շարունակուեցաւ ժողովրդական խաւերուն մէջ, և շատ հաւանաբար աւելի ճոխ եղանակով մը թագաւորական ու իշխանական թատրոններու շրջանէն:

(1) Պլուտարքոս կը հաղորդէ այդ դէպքը իր «Զուգակշիւ»-ին մէջ, հտ. Գ. տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1884. էջ 138: Արտաւազդ Բ. և պարթեւներու թագաւորը Որոտ (ըստ Պլուտարքոսի՝ Հելլոսի) խաղաղութեան զաշինք մը կը կնքեն, ու զայն ամրացնելու համար՝ Արտաւազդ Բ. իր քրորը կը պատկէ Որոտի որդւոյն:

Բաղրիւրի հետ (ըստ Պլուտարքոսի՝ Պակորոս), և այդ առթիւ կը բեմադրուի յոյն ողբերգակին գործը:
(2) Զուգակշիւ, անդ:
(3) Պատմ. Փ. Բիւզանդի, տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1933. Գալ. Դ. զԵ. ԺԵ. էջ 130: